ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՎՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԻ ԹԱՂՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(31 հոկտեմբեր, 1999 թ.)

Հոկտեմբերի 31-ին, ընդդիմ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ և մասնակցությամբ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու երեք եպիսկոպոսական Աթոռների գահակալների ու եպիսկոպոսաց դասի, Երևանի Ազգային օպերայի շենքում, որ դրվել էին հոկտեմբերի 27-ի արյունալի դեպքերին զոհ դարձած ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԺ նախագահի, պետական ու քաղաքական այրերի մարմինները, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Հավարտ արարողության Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսն իր ցավակցական խոսքն ուղղեց ՀՀ նախագահին, զոհվածների ազգակիր հարազատներին ու համայն հայությանը:

Ազգակիր Նախագահ Հայաստանի Հանրապետության և սիրեցյալ ժողովուրդ հայոց.

Վշտահոգի և վրդովված է համայն հայությունը ողջ աշխարհում՝ Հայրենիքի մեջ և նրանից դուրս: Քաղաքամայր Երևանի սրտում, Ազգության հրապարակում, որ տեսել է համախմբումն ու միակամությունը հայոց, նորոգ հավատի ու ինքնարթնության բոցավառ ոգին, երկունքը մեր ազգության ու ծնունդը անկախ մեր պետականության, այսօր կրկին բազմահազար հավաք է: Վշտահար ու սրտաբեկ հազարավոր մարդիկ վերջին ճանապարհ և հանգրվան են ուղեկցում Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին, վարչապետ Վազգեն Սարգսյանին, ԱԺ փոխնախագահներ Ցուրի Բախշյանին և Ռուբեն Միրոյանին, նախարար Լեոնարդ Պետրոսյանին, ԱԺ պատգամավորներ Միքայել Քոթանյանին, Հենրիկ Աբրահամյանին:

Դավադիր ձեռքերով արձակված գնդակները կարճեցին կյանքը մեր ժողովրդի ընտրյալ և արժանավոր զավակների, որ դեռ անցնելիք ճանապարհ ունեին՝ ազգին և Հայրենիքին բոլորանվեր ծառայության: Ինքնիշխան մեր ժողովրդի կամքով կոչվելով օրենսդիր և գործադիր -

կառավարող բարձրագույն իշխանության՝ նրանք պետիք ունեին բարգավաճ ու շեն, օրինահարգ ու բարօր դարձնելու Մայր Հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը, որպեսզի այն ի զորու լինի միավորել ողջ հայությանը և խաղաղ երկնքի ներքո, լիարժեք մասնակցությամբ պետությունների, համագործակցության մեջ ներկայացնել մեր ժողովրդի իրավունքը ազգերի դաշնության առջև: Այո, մեր պարտությունը հարուստ է կորուստներով: Մենք սովոր ենք հիշել, որ օրարնե՛րը եկան և ավերեցին մեր ստեղծածը, օրարնե՛րը փորձեցին ոչնչացնել մեր իրավունքը և անհետ կորցնել մեր հիշատակները, սակայն այսօր առավել ցավ և ընդվզում ենք ապրում, որովհետև դաժան ու սառնասիրտ այդ ոճիրը գործող դավադիր ձեռքերը հայի ձեռքեր են: Աննեղելիորեն թանկ ենք վճարում վերջին շրջանում տեղ գտած բացթողումների, սխալների, անտարբերության ու միմյանցից օտարացման համար:

Համազգային վշտի այս պահին մենք՝ մեր սիրեցյալ եղբայրների՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի, Երուսաղեմի ու Պոլսո հայոց Պատրիարքների, Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների հետ եկել ենք հարգանքի մեր կուրքը մատուցելու նահատակ պետական այրերին և վերստին մեր ցավակցությունը հայտնելու հավատավոր մեր ժողովրդին ու Հանրապետության նախագահին, հանգուցյալների՝ անդարձ կորստի ցավի մեջ ողբացյալ հարազատներին ու մերձավորներին բերելու մեր վշտաբեկ հոգու կարեկցանքը: Սիրելի ժողովուրդ հայոց, դատապարտելով անմարդկային այս եղեռնագործությունը՝ անհարիր քրիստոնյա հայ ժողովրդի ոգուն ու էությանը, հայրաբար հորդորում ենք համախմբվել հայրենի իշխանությունների շուրջ, լինել զգոն, ողջախոհ, եղբայրաբար միաբան, որպեսզի կարողանանք ապահով և անվրդով պահել մեր անկախ պետականությունը, խաղաղությունը մեր Հայրենիքի և անշրջելի դարձնել ու զարգացնել թանկ գնված մեր ձեռքբերումներն ու նվաճումները: Ապված մի՛ արասցե, որ անտեղի անցնեն մեր զրկանքների ու զոհողությունների, ազգային-ազատագրական հերոսական պայքարի փառաբանյա փարները: Թող արարումի թևածող ոգին զոհված հայորդյաց ուղեկից լինի երախտագետ մեր ժողովրդին, իսկ անմեղ հեղված արյունը նրանց, արթնացնելով բազում կորուստների ցավը, որ դարեր ի վեր կրել ենք, համախմբի մեզ վասն սիրույն Հայրենյաց՝ վանելու անհանդուրժողության մահակերպ սրվերը մեր հոգիներից, նորոգելու մեր մեջ հավատը, երկնառաք հույսը և սերը՝ այսուհետև չունենալու այսպիսի կորուստներ: Հավատում ենք ողջախոհությանը, իմաստությանը մեր ժողովրդի, դժվարին պահերին միշտ դրսևորած արիությանը, որով վերապրել է ու շարունակել իր ստեղծագործ կյանքը: Հազար-հազարների ներկայությունն այստեղ վկայությունն է մեր ժողովրդի աներեր կամքի՝ մերժելու ամեն բռնություն և անօրինա-

կանություն, ստանձնելու պատասխանատվությունն իր այսօրվա և գալիքի:

Հարության հույսին խարսխված հավատով աշխարհի բոլոր կողմերում միավորվել է համայն հայության աղոթքն առ Աստված՝ խնդրանքով՝ արարչական Իր սիրով ընդունելու երկնային հանգրվաններում հոգիները անմեղ զոհերի, պահպանելու խաղաղությունը և ապահովությունը մեր Հայրենիքի: Թող Բազումողորմ Տերը «լուսաւոր առնէ զհոգիս հանգուցելոցն» և հանգչեցնի երանավետ իր հավերժության մեջ: Թող Սուրբ Հոգու շնորհով Ամենահնամ Աստված համբերություն և մխիթարություն պարգևի ննջեցյալների հարազատներին ու մերձավորներին, մեզ ամենքիս:

Խունկ և օրհնություն, մշտառաք աղոթք հանգուցյալների պայծառ ու անմեռ հիշատակին և շիրիմներին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: